ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՌԵՒՏՈՒՐԸ ԳԻՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ[1] ԱՒԱՆԴՈՅԹ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԽՈՐԷՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ
XORENBASK86@GMAIL.COM

ԱՌԱՋԱԲԱՆ

Հետազօտութեան հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետութեան երկրորդ մեծագոյն քաղաքի քաղաքային առեւտրի մշակոյթի դիտարկմամբ հասնել համեմատական վերլուծութեան՝ Երեւան քաղաքի հետ: Հետազօտութեան գլխաւոր կէտերն էին.-

- Դիտարկել առեւտրականի կերպարը Գիւմրիում.
- Փորձել քաղաքային առեւտրի մեջ դիտարկել սուպէրմարկէտային եւ բազարային[2] առեւտուրը.
- Տալ քաղաքային միջավայրում առեւտրատեղերի ու շուկաների տեղաբաշխուածութիւնը եւ առեւտրագօտիների առաջացման պատճառները:

Յօդուածի առաջին հատուածում ներկայացուելու է քաղաքային առեւտրի վերաբերեալ գրականութեան տեսութիւնը, որը թոյլ կը տայ պատկերացնել թէ ինչպիսի տեսութիւններն են հանդիսանում հիմնական քննարկման թեման:

Երկրորդ հատուածում Գիւմրու աւանդական՝ ԺԸ.-ԺԹ. դարերի նիւթի հիման վրայ, փորձելու ենք ներկայացնել ժամանակակից Գիւմրու առեւտրականների գործունէութիւնն ու շուկան:

ԱՌԵՒՏՐԻ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հասարակութեան առեւտրականացման եւ ընդհանրապէս հասարակագիտական գիտաճիւղում առեւտրի, շուկայի եւ տնտեսական փոխյարաբերութիւնների վերաբերեալ հետաքրքիր ուսումնասիրութիւններով հանդես է եկել գերմանացի ընկերաբան եւ մարդաբան Մաքս Վեբէրը իր «Տնտեսութիւն եւ Հասարակութիւն» աշխատութեան մէջ: Վեբէրը փորձելով դասակարգել քաղաքային մշակոյթի առանձնայատկութիւնները՝ դրանցում կարեւոր դեր է տալիս քաղաքային հրապարակի եւ շուկայական յարաբերութիւններին: Ըստ Վեբէրի, քաղաքային հրապարակն ու շուկայական յարաբերութիւնները թոյլ են տալիս մրցակցութեան եւ փոխյարաբերութիւնների առաւել լայն շերտի պատճառով առաջ բերել զարգացում, որն էլ սկսել է անջատում մտցնել գիւղական եւ քաղաքային բնակավայրերի միջեւ[3]:

Իսկ գերմանացի տնտեսական մարդաբան Հայգօ Շրադէրը

ընդհանրապէս յատուկ ենթակառոյցների առանձնացմանն է դէմ՝ գտնելով, որ ինչպէս մշակութային մարդաբանութեան՝ յատկապէս բրիտանական գործառնական (ֆունկցիոնալիստների) դպրոցի այնպէս էլ ընդհանուր ընկալմամբ ժամանակակից հասարակութիւնը դեռեւս չի տարբերւում ենթահամակարգերի, ինչպիսիք են՝ տնտեսագէտներ, իրաւաբաններ, կրօնի, քաղաքական եւն., որոնք քիչ թէ շատ անկախ են միմեանցից - իւրաքանչիւր ընկերաբանական գործողութիւն այդ ենթախմբերի վրայ ազդում է համաչափ: Սրանով հանդերձ, ամէն մի գործողութիւն ինչքան տնտեսագիտութեան ուսումնասիրութեան նիւթ է, նոյնչափ մարդաբանութեան գործը[4]:

Ֆրանսիացի ազգագրագէտ եւ ընկերաբան Մարսէլ Մոսը նկարագրում է շարժիչ գործողութիւնը որպէս ընդհանուր ընկերաբանական երեւոյթ, միեւնոյն ժամանակ՝ տնտեսական, քաղաքական, կրօնական եւն., եւ այս տեսակէտը կանոնակարգերում ու աւանդոյթներում դրսեւորւում է փորձնական դաշտային ուսումնասիրութիւնների շնորհիւ: Հետազօտել հասարակութեանը, նշանակում է, փորձել նկարագրել դրա ընկերաբանական, քաղաքական, տնտեսական, կրօնական եւ այլ համակարգերը որպէս ամբողջութիւն, քանի որ սրանք անբաժան են միմեանցից[5]:

Փաստօրէն, վերոնշեալ տեսաբանական քննութիւնն ու դրան յաջորդող գրականութեան տեսութիւնը թոյլ են տալիս դիտարկել հասարակութեան առեւտրականացման մոդէլը՝ տեղային դաշտային նիւթի վրայ: Համեմատական այս անդրադարձը մենք չենք կտրի ինչպէս յետխորհրդային այլ հանրապետութիւնների այնպէս էլ յետխորհրդային համակարգից դուրս որոշ քննութիւններից:

ԱՌԵՒՏՈՒՐՆ ՈՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆՆ ԱՒԱՆԴԱԿԱՆ ԳԻՒՄՐՈՒՄ

Աւանդական շրջանի Ալեքսանդրապոլի քաղաքային մշակոյթի վերաբերեալ հետաքրքիր դիտարկումներով է հանդէս գալիս ազգագրագէտ Գրիգոր Աղանեանը[6]: Ըստ նրա, Գիւմրի-Ալեքսանդրապոլի քաղաքային արհեստների եւ առեւտրի զարգացման կարեւոր խթանիչ է հանդիսացել ներկայումս Թուրքիայի տարածքում գտնուող հայկական Կարս, Կարին, Վան եւն. քաղաքների արհեստաւորների եւ առեւտրականների՝ դէպի Ալեքսանդրապոլ-Գիւմրի տեղաշարժը[7]: Տուեալ արհեստաւոր-առեւտրականութեան տեղաշարժը դէպի Ալեքսանդրապոլ կապուած էր քաղաքական մի շարք իրադարձութիւնների հետ: Արդարեւ, ռուս-թուրքական, ռուս-պարսկական պատերազմները խթանեցին որ ներկայիս ՀՀ հիւսիսային դարպաս համարուող Գիւմրին (որը նաեւ կարեւոր յենակէտ էր Ռուսաստանի համար) արագ զարգացում ապրի:

Վերոնշեալից բացի Գիւմրի-Ալեքսանդրապոլի արհեստաւոր-առեւտրականութեան հետազօտական մեծ հնարաւորութեան նիւթ են հանդիսանում ԺԹ. դարավերջ-Ի. դարասկիզբ Կովկասում եւ Անդրկովկասում առեւտրական գործունէութիւնը, շուկան, առեւտրականին եւ գնորդին, վաճառականին որպէս մեծատունի ներկայացնելու լուսանկարիչ Դիմիտրի Երմակովի կատարած լուսանկարները: Հայոց Ազգագրութեան Թանգարանի[8] «Ֆ» ֆոնդի գիտաօժանդակ նիւթերում լուսանկարների մեծ հաւաքածուով է աչքի ընկնում հենց Երմակովի լուսանկարների հաւաքածուն: Երմակովի այս հաւաքածուն առաջին հերթին հանդէս է գալիս որպէս ժամանակի առեւտրի եւ շուկայի, վաճառականի եւ սպառողի կերպարների նկարագրման եւ ուսումնասիրման հիանալի նիւթ, իսկ որպէս թանգարանային հաւաքածու այն կարող է ցուցադրել որպէս տուեալ ժամանակի խանութ, առեւտրականի կենցաղ ներկայացնող միջոց. թէ՛ որպէս հիմնական եւ թէ՛ որպէս գիտաօժանդակ նիւթ:

Տուեալ ժամանակաշրջանի համար առեւտրի եւ առեւտրականութեան վերաբերեալ տուեալները հիմնականում հետեւեալ բնութագիրն ունեն, ըստ Գիւմրիի ժողովրդական ճարտարապետութեան, քաղաքային կենցաղի եւ ազգային ճարատարապետութեան Ձիթողցոնց տուն-թանգարանի տեղեկատուութեան:

Ալեքսանդրապոլում առեւտրականներն ըստ իրենց կատարած դերի, բաժանուած էին 4 կարգի.-

I- բազազներ-կտորի առեւտրով զբաղուողները, որոնց թիւն հասնում էր 300 (290 հազ. տարեկան շրջանառութիւն).

II- արթարներ արդուզարդի առեւտրով զբաղուողները, որոնց թիւն հասնում էր 150 (55 հազ. տարեկան շրջանառութիւն).

III – ալաֆներ - մրգերի եւ գիւղատնտեսական մթերքների առեւտրականներ, որոնց թիւը հասնում էր 120 (25 հազ. տարեկան շրջանառութիւն).

IV- դուքանչիներ, որոնք զբաղւում էին մանրածախ եւ խմիչքի առեւտրով, որոնց թիւը հասնում էր 100(60 հազ. տարեկան շրջանառութիւն).

Առեւտրականների ընդհանուր թիւը կազմում էր 670 մարդ, որոնց տարեկան շրջանառութիւնը կազմում էր 430 հազ. ռուբլի:

Առեւտրի աշխուժացման ազդակները բաւականին շատ էին՝ դրանցից էին ռուս-պարսկական երկրորդ պատերազմից (1826-1828) յետոյ հաստատուած երկարատեւ խաղաղութիւնը, մաքսային համակարգի կիրառումը, ճանապարհաշինութիւնը:

Սրան գումարւում էր եւ Օսմանեան Թուրքիայի տարանցիկ առեւտրի կարեւոր կէտ լինելը: Ալեքսանդրապոլ էին ներմուծւում կտորեղէնի

զանազան տեսակներ, մրգեր, գինի, օղի: Արտահանւում էր ցորեն, կաշի, բուրդ, օճառ եւն.:

Առեւտրի կազմակերպման բնագաւառում նորութիւնն այն էր, որ 1850ականներից կազմակերպւում էր ամէնամեայ տօնավաճառ, որը տեւում էր երկու շաբաթ:

Քաղաքում կային ամէնօրեայ շուկաներ՝ «Ղափան-ղանթար», որը տեղացիներն անուանել են «Զարսու», եւ «Մալիմէյդան»՝ անասունների շուկայ:

Առեւտրի կազմակերպման գործում իրենց զգալի դերը խաղացին քարաւանատները: Սրանք ունէին իրենց ախոռները, հիւրասենեակները, խանութները, պահեստները եւն.:

Քարաւանատներ էին Մոլլա-ալլունը, Կարմիր խանը, Բաբանենց խանը, Սաաթչոնց խանը, Սիլաջոնց խանը: Կային նաեւ 100ից աւելի խանութներ:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՌԵՒՏՈՒՐՆ ՈՒ ՇՈՒԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՒՄՐԻՈՒՄ

Ժամանակակից Գիւմրու քաղաքային առեւտրին հանդիպում ենք հենց միջքաղաքային աւտօկայանից սկսած, որը գտնւում է Գիւմրի քաղաքի հարաւ-արեւելքում: Աւտօկայանի դիմաց՝ ձախ եւ աջ կողմերում հերթականութեամբ դասաւորուած են խանութները, որոնք մեծաձախ առեւտրի նշանակութիւն ունեն: Սա պայմանաւորուած է նրանով, որ հանդիսանալով շրջակայ բնակավայրերի կենտրոն, ինչպէս նաեւ Երեւանից ապրանքի բերման հիմնական նշանակման կէտ, այս խանութները եկամուտը առաւել մեծացնելու համար՝ փորձել են տեղաբաշխուել հենց քաղաքային աւտօկայանի մօտ:

Հետաքրքիր է, որ ընդհանրապէս Խորհրդային քաղաքաշինութեան մշակոյթում շուկաներն ու բազարները տեղակայում էին աւտօկայանների մօտ, քանի որ քաղաքները շրջանային կենտրոնների դեր էին կատարում եւ շրջակայ գիւղական միջավայրերը արբանեակներ էին տուեալ շրջանային կենտրոնի համար:

Գիւմրու աւտօկայանին մօտ խանութները ունեն հետեւեալ նկարագրութիւնը.-

Մէկ կամ երկու յարկանի քարի շինութիւններ են, որոնց դռներից սկսուած ցուցադրութեամբ շարուած են հիմնական վաճառքի ապրանքները: Աւտօկայանին առաւել մօտ խանութները հիմնականում տնտեսական բնոյթ ունեն. վառարաններ, ալիւր, փայտէ իրեր, կենցաղային տեխնիկա, բանջարա-պարտէզային մշակման գործիքներ եւն.:

Այս ցուցադրուող ապրանքները, իհարկէ ենթադրել են տալիս, որ շրջակայ գիւղական բնակավայրերի համար առաւել պահանջուած ապրանքները հենց սրանք են: Եթէ համեմատենք ՀՀ միւս մարզային կենտրոնների եւ այլ քաղաքային բնակավայրերի հետ, ապա նկատելի է, որ այս քաղաքներում եւս կարելի է հանդիպել նոյն երեւոյթին, երբ շուկայ-բազարը ընդգրկող տարածքը ապրանքների ցուցադրուող տաղաւարներն հեռու են ընկած եւ քիչ-քիչ ընդլայնում է ստանում այդ տաղաւարների ընդարձակումը: Որպէս այդպիսի համեմատական կարելի է նշել Իջեւան քաղաքի քաղաքային շուկան, որը շուկայի տարածքից արդէն շատ է հեռացել: Իջեւան քաղաքի պարագայում սա կապուած է նաեւ մէկ այլ հանգամանքի հետ[9]:

Գիւմրի քաղաքի քաղաքային շուկայի ձեւաւորման խնդրով, նշենք որ աւտօկայանից մինչեւ խորհրդային շրջանի քաղաքաշինութեան ընթացքում ձեւաւորուած շուկայ՝ մօտ մէկ կիլօմետր է: Սա մի ուղու վրայ է եւ մինչ շուկայ հասնելը կարելի է տեսնել բացօթեայ, շուրջ 30-40 խանութներ, որոնք փողոցի մայթերի վրայ են դասաւորուած: Սրանք հիմնականում վրանային կառուցուածք ունեն, սակայն հանդիպում են նաեւ դեռեւս Սպիտակի երկրաշարժի տարիներին որպէս օգնութիւն ստացած տնակները, որոնք յետագայում շէնքերի կառուցումից յետոյ վերածուել են խանութների, մանր արհեստաւորների արհեստանոցների, վարսաւիրանոցների, պահեստների: Բուն շուկան, որը մի ամբողջ համալիր է, պայմանականօրէն բաժանենք միքանի մասերի, որոնք ունեն իրենց առանձին անուանումները, որից ելնելով էլ ամէն շուկայի առանձին մասի ընկալում տարբեր է:

Գիւմրիի ժամանակակից քաղաքային շուկայի (Վարի շուկայ, Ներքեւի շուկայ) պայմանականօրէն բաժանման ենթարկուած հատուածներն են.-

- Բազար
- Անգար
- Տօնավաճառ Լիաննա
- Լաչինի Միջանցք

Բազարը դեռեւս խորհրդային քաղաքաշինութեան արդիւնքն է, որը որոշակի փլուզումների է ենթարկուել: Այստեղ երեք երկկողմ շարքով տաղաւարներ են շարուած մինչեւ 15մ երկարութեամբ ձգուելով: Բազարի մուտքի մօտ կենդանիների՝ հիմնականում թռչունների, վաճառք է իրականացում: Տաղաւարների առաջին գիծը, որը սկսում է հենց թռչնավաճառների մօտից, հիմնականում հիւսուածեղէնի վերավաճառողներն են: Վերավաճառողները այն մարդիկ են - հիմնականում թոշակառու - ովքեր մասնաւոր կամ պետական հիւսուածեղէնի հիմնարկներից, որոշ տոկոսադրոյքով վերցնում են

կտորեղէն, ներքնազգեստներ, մանկական հագուստներ եւ վաճառում: Թէ՛ ապրանքի գինը, թէ՛ վճարուող տոկոսի չափը որոշում են ապրանքի տէրերը:

Երկրորդ շարքը, տաղաւարների սկզբնական մասում համեմունքների վաճառքով է լցուած, դրան կից կան նաեւ տարբեր առարկաների, մանրավաճառային ապրանքներ: Երրորդ տաղաւարների շարքը եւս ունի հիւսուածեղէնի եւ մանրավաճառային ապրանքներ: Այս բազարի վերջին հատուածում երկաթագործ վարպետի արհեստանոցն է, իսկ արհեստանոցի դիմաց շարուած են վառարաններ, խողովակներ եւ այլ ցուցադրանմուշներ, որոնք եւս վաճառքի են հանուած: Այստեղից արդէն սկսւում է Գիւմրու շուկայի երկրորդ հատուածը՝ Անգարը:

Անգարը մեծ ամբարային տարածք է, նախկին խորհրդային պահեստ յիշեցնող շինութեամբ, որն այսօր վերածուել է փակ շուկայի եւ յարակից տարածքի: Այստեղ հիմնականում պտուղ-բանջարեղէնի վաճառք է իրականացւում: Անգարի փակ շուկան սակաւամարդ է. այստեղ շատ քիչ թուով առեւտրականներ կան: Հարցումներից պարզ դարձաւ, որ նրանք ներսում կանգնելու համար օրական 500 դրամ են վճարում, իսկ որոշ մարդիկ, որոնց վաճառողները լաւ էին ճանաչում, գալիս եւ հաւաքում են այդ 500 դրամները: Այստեղ առեւտրով զբաղուող իւրաքանչիւրն ունէր իր յատուկ, մնայուն տեղը, որպէսզի իրենց ճանաչող յաճախորդները շփոթմունքի մեջ չընկնեն. իրենք չեն փոխում իրենց տեղերը:

Անգարի բացօթեայ տարածքում եւս պտուղ-բանջարեղէնի վաճառք է իրականացւում: Այստեղ բեռնատար եւ մարդատար մեքենաներով ՀՀ Արմաւիր, Մասիս, Արտաշատ եւն. քաղաքներից բերւում է մեծաթիւ բանջարեղէն եւ միրգ ու հանւում վաճառքի: Այս վաճառողների համար դրսում առաւել յարմար է, քանի որ մեքենաների միջից էլ հենց իրականացւում է վաճառքը: Սա յարմար է այն տեսանկիւնից, որ փակ շուկայում ամէն երեկոյ պէտք է ապրանքը հաւաքել եւ միայն յաջորդ օրը նորից հանել վաճառքի, իսկ մեքենաների մէջ առաւել հեշտ է այդ առումով հաւաքելու կարիք չի լինում: Այստեղ եւս կայ տեղի վճար:

Անգարի դիմացում է գտնւում է Տօնավաճառ Լիաննան: Հայկական միջավայրում յետխորհրդային տարիների նոր ընկալումներից մէկն է հագուստեղէնի վաճառքի կէտերին անուանել տօնավաճառ: Այսպիսին են Երեւանի Ռոսիա Տօնավաճառը - որտեղ բացառապէս հագուստի վաճառքն է զարգացած - Մալաթիա Տօնավաճառը, որը եւս մեծամասամբ հագուստի վաճառքի կէտ է համարւում: Անգարի դիմաց գտնուող Լիաննա Տօնավաճառը նոյն ընկալումն ունի: Սա երկյարկանի շէնք է, որը 2000ականներին է կառուցուել եւ վերջերս վերանորոգուել: Այստեղ առանձին սենեակներ են յառաջացած, որտեղ հիմնականում

վաճառում է կօշկեղէն եւ հագուստ: Երկու մուտքերի առաջին սրահներում վաճառում է զարդեղէն: Այստեղ առեւտրականների մի մասը վերավաճառողներ են, որոնք օրը երկու կամ երեք հազար դրամ աշխատավարձով վաճառում են ապրանքատիրոջ ապրանքը: Այս ծառայութիւնից օգտւում են հիմնականում այն առեւտրականները, ովքեր միքանի տեղ են ապրանք հանում վաճառքի կամ ունեն նաեւ խանութ:

Անգարի ու բազարի մէջտեղում գոյացած միջանցքը գիւմրեցիները անուանում են Լաչինի միջանցք: Բանն այն է, որ այդ շուկայի յարակից փողոցում, որն իր նեղլիկ լինելու պատճառով գիւմրեցիների կողմից ստացել է «Լաչինի Միջանցք[10]» անուանումը, նոյնպէս մի հսկայ շուկայ է, ուր առեւտրականները տեղի համար չնայած մուծում են կրկնակի աւել վարձավճար՝ 2500-3000 դրամ, քան այդ շուկայում՝ Անգարում (ծածկած շուկայում), սակայն այն առաւել մարդաշատ վայր է: Այստեղ վաճառուող ապրանքներն են գիւղմթերքը, տնտեսական պարագաներ, հանդիպում են նաեւ հագուստի վրանային խանութներ: Բազարից դէպի Լաչինի Միջանցք մուտքի մօտ կանգնում են փող փոխողները՝ «վալիւտի գործ էնողները»: Լաչինի միջանցքը ձգւում է մօտ 500 մետր: Նախատօնական օրերին, այն առաւել մարդաշատ է լինում, քան շուկայի վերոնշեալ մնացեալ հատուածները:

Բացի բազարային առեւտրից Գիւմրիում լայն տարածում ունեն մեծ ու միջին խանութները, որոնք հանրախանութի ընկալում ունեն: Անուանումներում եւս նշւում է սոյն խանութների սուպէրմարկէտ լինելը: Ինչպէս աւտօկայանի յարող տարածքում, այնպէս էլ քաղաքի տարբեր վայրերում կան այդպիսի հանրախանութներ: Քաղաքային բնակչութիւնը բոլորի մասին յստակ տեղեկութիւն ունի: Յետխորհրդային Հայաստանում սուպէրմարկէտային առեւտրի մշակոյթը լայն տարածում գտաւ:

Սուպէրմարկէտային մշակոյթում կան նաեւ տեղական առանձնայատկութիւններ: Սուպէրմարկէտներում վաճառողուհիների քանակը մեծ է, ամէն բաժին ունի մէկ-երկու աշխատակից, ովքեր հանդիսանում են սպասարկող-խորհրդատուներ: Սուպէրմարկէտային առեւտրի կարեւոր բաղադրիչներից է իրերի, ապրանքների պիտակաւորումը, որոնց վրայ մանրամասն ներկայացուած է ապրանքի բաղադրութիւնը, արժէքը եւ արտադրման տարեթիւը: Սակայն հարցուած սուպէրմարկէտի աշխատակիցները նշում էին, որ իրենք հիմնականում խորհրդատուութիւն են ապահովում յաճախորդների համար: Սա առաւել բազարային առեւտուր յիշեցնող երեւոյթ է, երբ յաճախորդը մանրամասն տեղեկութիւն է փորձում ստանալ գնուող ապրանքի վերաբերեալ:

Բացի սուպէրմարկէտներից, շուկայից, բազարից Գիւմրում մեծ թիւ են կազմում շուկայից դէպի քաղաքային հրապարակ ձգուող քարաշէն խանութները, որոնց անուանումները հիմնականում հանդիսանում են կամ ապրանքի տեղի ցուցիչ կամ էլ տուեալ խանութպանի ընտանիքի անդամների կամ հենց իր անունով են լինում: Դրանց օրինակներից են «Փարիզ», «Դուբայ» եւն. անուանումներով խանունթները, որոնց անունները պայմանաւորուած են ապրանքի ներածման վայրով: «ՍՍՍՊ» անուանումով խանութի գլխաւոր վերակացուն մեկնաբանեց, որ խանութը այսպէս է անուանուել, քանի որ «սովետի ժամանակ ապրանքը ջրի գին ունէր, մարդիկ ամէն ինչ ունէին»: Սա բնորոշ է հենց այդ խանութին, քանի որ իրենց խանութում ամէն ինչ վաճառւում է շատ մատչելի գներով: Որոշ խանութներ էլ որոշակի տեսականի ունէին: Օրինակ «Օժիտ» խանութում վաճառւում էին միայն ամուսնական պարագաներ եւ յաճախորդներին ուղղորդելու համար էլ հենց խանութը անուանել էին այդպէս:

Անդրադառնալով Գիւմրու ժամանակակից առեւտրականներին, կարելի է նշել որ նրանք իրենց չեն ընկալում որպէս առեւտրականներ: 30 մանր ու միջին առեւտրով զբաղուողների եւ 8-10 սուպէրմարկէտների, խանութների աշխատակիցները հարցման սկզբում որպէս մասնագիտութիւն նշում էին ոչ թէ առեւտրական կամ զբաղուածութիւնը որպէս առեւտուր, այլ այն առաջնային մասնագիտութիւնը, որով կրթութիւն են ստացել: Հիմնականում առեւտրական եզրոյթը բացասական ընկալումներ ունէր կամ մեծ առեւտրով զբաղուելու ընկալում ունէր: Բացասական ընկալման օրինակներից կարելի է համարել այն, որ առեւտրական եզրոյթը հայկական իրականութեան մէջ դեռեւս ունի խորհրդային շրջանից պահպանուած *սպեկուլեանտ*ի[11], խաբեբայի ընկալում:

Հետաքրքիր է, սակայն, որ հայկական միջնադարեան հեղինակներից Մխիթար Գօշը ունեցել է մի շարք կէտեր, որոնցով արգելքներ էր դրւում առեւտրականների այս կամ այն ոչ-ընդունելի արարքների վրայ[12]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Գիւմրին չնայած քաղաքաշինութեան եւ բնակչութեան թուաքանակով ու միգուցէ մշակութային բազմազանութեամբ քաղաքային բնակավայր է, սակայն ժամանակակից քաղաքային բնակավայրին բնորոշ առեւտրական յարաբերութիւններ հիմնականում չունի: Քաղաքային առեւտուրը ձեւաւորուել ու շարունակում է զարգանալ բացառապէս բազարային տիպով, հասարակական յարաբերութիւնները խստիւ կապուած են առեւտրական գործընթացների հետ՝ տնտեսական

գործընթացներում աշխատում են ինքնաբուխ, ընկերա-բարեկաման գործօնները եւ խորհրդային շրջանից մնացած առեւտրականի վերաբերեալ բացասական երանգաւորումների կրողն է նոյնիսկ այսօրուայ գիւմրեցի առեւտրականը եւ առաւել յաճախ խուսափում է առեւտրական մասնագիտացման բնորոշումից: Սա նաեւ խօսում է սոյն մասնագիտութեան կրողների հասարակական խմբի չձեւաւորուածութեան մասին: Փաստօրէն ժամանակի եւ փորձառութեան ընթացքում սոյն կայացած առեւտրականները մասնագիտական խմբաւորումներ այդպէս էլ չեն ստեղծում, որը առկայ էր տուեալ մասնագիտացման առաւել վաղ՝ 18-19րդ դարերի ընթացքում: Ունենալով կայացած առեւտրի միքանի գօտիներ՝ այս առեւտրականները շարունակում են իրենց մասնագիտութիւնը կոչել ժամանակաւոր զբաղմունք, որը եւ վերագրում են յետխորհրդային անցումային շրջանի աշխատանքային շուկայի բացակայութեանը իրենց նեղ մասնագիտութեան շրջանակներում աշխատանք չգտնելու հանգամանքին:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Գիւմրի (մինչեւ 1837՝ Գիւմրի, 1837-1924՝ Ալեքսանդրապոլ, 1924-91՝ Լենինական), բնակչութեան քանակով ու մշակութային նշանակութեամբ Հայաստանի Հանրապետութեան երկրորդ քաղաքն է, գտնուում է հիւսիս-արեւմտեան մասում՝ Շիրակի մարզում, Ախուրեան գետի ձախ ափին, Երեւանից 126 կլմ. հեռաւորութեան վրայ: Տարածքը՝ 3626 հա, 2012ի դրութեամբ ունեցել է 145,9 հազար բնակիչ, ծովի մակերեւոյթից բարձր է աւելի քան 1500 մետր: Քաղաքի կարգավիճակ ունի 1840ից: http://shirak.mtaes.am/u_files/gyumri.pdf 13/09/2015:

[2] Բացօթեայ շուկայի հասկացութիւնը առաւել տարածուած է «բազար» եզրոյթով:

[3] M. Weber, *Economy and Society, volume 1*, University of California press, Berkley 1963, էջ 653-659:

[4] Haygo Shroeder, Ekonomicheskaya Antropologia (Տնտեսագիտական մարդաբանութիւն), Սանկտ Պետերբուրգ, 1999, էջ 98-101:

[5] Mauss M. Company, *Exchange Personality Proceedings in Social Anthropology, Մոսկուա, 1996, էջ 287-294:*

[6] Գրիգոր Աղանեան, «Ալեքսանդրապոլի Էսնաֆութիւնները XIX Դարում, (Համքարական Ծիսակարգ)», http://shirak.asj-oa.am/382/1/49-54.pdf 13/09/2015:

[7] Գրիգոր Աղանեան, «Ալեքսանդրապոլի Քաղաքային Տնտեսութեան Զարգացման Հիմնական Միտումները (XIX Դարավերջ-XX Դարասկիզբ)», http://shirak.asj-oa.am/285/1/77-84.pdf 13/09/2015:

[8] Սարդարապատի հերոսամարտի յուշահամալիր, Հայոց Ազգագրութեան Եւ Ազատագրական Պայքարի Պատմութեան Ազգային Թանգարան:

[9] Քաղաքը գտնուում է միջհանրապետական մայրուղու վրայ եւ աւելի յաճախ առեւտրական-վաճառողները իրենց ցուցադրուող-վաճառուող ապրանքները առաւելապէս ցուցադրելու են հանում հենց այդ ճանապարհով անցնող սպառողների համար:

[10] Լաչինը բնակավայր է, որը գտնուում է Հայաստանի Հանրապետութեան եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան միջեւ (http://www.oneworld.am/photojournalism/lachin/):

[11] Լատ. Specio - հայեացք բառից է գալիս, խորհրդային շրջանում ապրանքի ինքնարժէքի կեղծարարը եւ այդ կեղծումով գումար աշխատողներին անուանում էին սպեկուլեանտ: Տուեալ արարքը պատժելի էր խորհրդային երկրում, որը եւ առաջ էր բերել հասարակական բացասական վերաբերմունքը տուեալ վիճակի հանդէպ: Յետագայում սպեկուլեանտ անուանումը բացի կեղծարարութիւնից նաեւ պատեհապաշտ մարդկանց էլ էր կցում:

[12] Մխիթար Գօշ, «Յաղագս Վաճառողաց եւ Գնողաց Երկիր», *Գիրք Դատաստանի*, Հտր. Ա., աշխ. Խոսրով Թորոսեան, Երեւան, Հայկ ՍՍՀ ԳԱ Հրատ., 1975, էջ 68-69. նաեւ՝ http://www.digilib.am/book/277/282/5146/%D4%B3%D5%AB%D6%80%D6%84%20%D4%B4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB,%20%D4%B1%20%D5%AD%D5%B4%D5%A2 18/07.2016:

URBAN TRADE IN THE CITY OF GUMRI: TRADITION AND MODERNITY
(Summary)

KHOREN GRIGORIAN
XORENBASK86@GMAIL.COM

By observing the image of the trader in Gumri, its bazaars and supermarkets, the author tries to make sense of the city's urban trade and analyse the trade culture of contemporary Gumri.

The author argues that trade culture is not a mere perception of the economy; it is also a unique bearer of traditional and modern culture. This is explicit in the case of Gumri, the second largest city in the Republic of Armenia and a city that provides a typical reflection of the past reality of Turkish and Iranian empires. Gumri is a town where modern culture is mixed with trade traditions that came from the Eastern part of Anatolia (Western Armenia, from Kars, Karin-Erzrum). These traditions largely disappeared during Soviet rule but started to resurface after the collapse of the Soviet Union.